ԼՈՒՍՏԵԼԵԿՈՄ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԵՐՔՈ ԳՏՆՎՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՑԱՆՑԻ ԵՎ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՐԴԱՐ ԱՌԵՎՏՐԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

«Լուստելեկոմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից մատակարարների կամ հնարավոր մատակարարների հետ հարաբերություններում արդար առևտրի, ազատ տնտեսական մրցակցության կանոնների պահպանումը իրականացնում է երկկողմանի մատակակարման պայմանագրերի կնքման միջոցով:

Երկողմանի համագործակցության համար պարտադիր պայման է

1. Մատակարարը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված է որպես իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր:
2. Մատակարարն ունի բոլոր անհրաժեշտ լիցենզիաները և թույլտվությունները ՀՀ օրենսդրությանը համապատասխան լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար:
3. Մատակարարը սնանկ չի ճանաչվել, մատակարարի նկատմամբ սնանկության ընթացակարգեր չեն նախաձեռնվել:
4. Մատակակարի կողմից ներկայացված ապրանքները և դրանց փաթեթավորումը պետք է համապատասխանեն ՀՀ, ԵԱՏՄ օրենսդրությամբ սահմանված բոլոր պահանջներին: Բեռնարկղերը և փաթեթավորումը պետք է ապահովեն ապրանքների անվտանգությունը փոխադրման ընթացքում:
5 Ապրանքի մակնշումը, փաթեթավորումը պետք է համապատասխանեն ՀՀ-ում գործող օրենսդրության պահանջներին: ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում ապրանքը պարունակում է QR կոդ:
6. Ապրանքների առաջարկվող գինը պետք է լինի մրցունակ, որի դեպքում կապահովվի ապրանքի իրացվելիությունը: Գնի մրցունակությունը որոշելիս ի թիվս այլ հանգամանքների հաշվի է առնվում համանման ապրանքների արդեն իսկ գործող պայմանները և այլ մատակարարների կողմից առաջարկվող պայմանները՝ ի համեմատություն առաջարկվող ապրանքի:
7. Եթե ապրանքը արտադրվում է մատակարարի կողմից պետք է ունենա ապրանքի որակը բնութագրող հավաստագրեր, սերտիֆիկատներ, պարունակի շտրիշ կոդ:

Ընկերությունը հավասար պայմաններում է դիտարկում բոլոր մատակարարներին՝ ձևավորելով փոխադարձ հարգանքի շրջանակներում աշխատելու քաղաքականություն: Ընկերությունը բացառում է խտրական պայմանների սահմանումը և կիրառումը մատակարարների նկատմամբ:

Ընկերությունը նոր տեսակի ապրանք ստանալու դեպքում իրականացնում է մատակարարների և նրանց ապրանքների վերաբերյալ ներկայացված առևտրային առաջարկների մանրակրկիտ ուսումնասիրություն՝ ելնելով ապրանքի որակական չափանիշներից , շուկայի հագեցվածության աստիճանից և պահանջարկից:

Մատակարարի և ապրանքի ընտրությունը տեղի է ունենում Ընկերության նախաձեռնությամբ կամ Մատակարարի կողմից համապատասխան առևտրային առաջարկ ներկայացնելու եղանակով, որից հետո կնքվում է երկկողմանի մատակարարման պայմանագիր:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՑԱՆՑՈՒՄ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՑՈՒՑԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Առևտրային ցանցում ապրանքների ցուցադրությունը կազմակերպվում է դարակաշարերում, հատուկ սարքավորման վրա, սառցարաններում և սառցախցիկներում՝ ելնելով ապրանքի պահպանման պայմաններից:

Բոլոր մատակարարների համար Ընկերության կողմից ապահովվում է հավասար հնարավորություններ ապրանքների ցուցադրման համար՝ հաշվի առնելով հետևյալ առանձնահատկությունները:

ա. ապրանքների իրացման ծավալը առևտրային ցանցում կամ տվյալ առևտրի օբյեկտում.

բ. տվյալ ապրանքի՝ ցուցադրման ենթակա տեսականու քանակը.

գ. տվյալ ապրանքի ցուցադրման հետ կապված ֆիզիկական առանձնահատկությունները (սառնարանային ապրանք, ծխախոտ, կշռովի ապրանք և այլն).

դ. ապրանքի արտաքին տեսքը, չափը, քաշը, համադրությունն ընդհանուր դարակաշարում ցուցադրված այլ ապրանքների հետ:

Ապրանքների ցուցադրության համար Ընկերությունն իրավունք ունի մատակարարներից ծառայության համար գանձել լրացուցիչ վճարներ կամ ստանալ զեղչեր մատակարարվող ապրանքներից:

Դարակաշարերում և այլ հատվածներում ցուցադրության համար վճարի չափի

որոշման համար հիմք են ընդունվում դրանց տեղը, դիրքը, կոնկրետ ապրանքի համար հատկացվելիք տեղի մակերեսը և այլ հանգամանքներ, որոնք ուղղակիորեն կապված են ապրանքի իրացվելիությունը խթանող հանգամանքների հետ:

Լրացուցիչ վճարի կամ մատակարարվող ապրանքից զեղչի դիմաց Ընկերության կողմից մատակարարներին առաջարկվում է մարքեթինգային լրացուցիչ միջոցառումներ, որոնք կարգավորվում են երկկողմանի կնքվող մարքեթինգային պայմանագրերով :

ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

. Ընկերությունն իրավունք ունի միակողմանիորեն լուծել մատակարարի հետ կնքված մատակարարման պայմանագիրը, եթե՝

ա. մատակարարը չի համապատասխանում սույն կանոններում նշված նվազագույն չափանիշներին:

բ. մատակարարը թույլ է տվել Ընկերության հետ կնքված պայմանագրով սահմանված պարտավորությունների խախտումներ, այդ թվում՝ ապրանքների մատակարարման գծով խախտումներ, որոնք բացասական ազդեցություն են ունեցել Ընկերության տնտեսական գործունեության վրա:

Ընկերությունն իրավունք ունի հրաժարվել գործող մատակարարման պայմանագրում ներառված ապրանքից, եթե՝

- Ապրանքը չի համապատասխանում սույն կանոններում նշված ապրանքին ներկայացվող նվազագույն չափանիշներին.
- Ընկերությունը պարբերաբար սպառողներից ստանում է բողոքներ տվյալ ապրանքի վերաբերյալ.
- Ապրանքի վերաբերյալ առկա է իրավասու պետական մարմնի կամ դատարանի որոշումը, որ այն կամ նրա փաթեթավորումը, մակնշումը կամ ապրանքային նշանը խախտում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, այլ անձանց իրավունքները և շահերը.

Լուստելեկոմ ՍՊԸ